**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ**

# ՀՐԱՄԱՆԸ

02 փետրվարի 2016 թվականի N 12-Ն

*ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ 4-րդ մասով, 42-րդ և 44-րդ հոդվածներով, Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի առաջին մասով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասը, «ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» Կոնցեռն ՍՊ ընկերության 2014 թվականի նոյեմբերի 12-ի դիմումը, ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման 2015թ. օգոստոսի 21-ի թիվ ԲՓ 63 դրական եզրակացությունը.

*Հրամայում եմ*

1. «ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» Կոնցեռն ՍՊ ընկերությանը՝ ՀՀ Լոռու մարզի Մղարթ-Հագվի-Մեծ Ձոր հանքային դաշտի հանքերևակման Մղարթ և Հագվի տեղամասերում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար 2012 թվականի դեկտեմբերի 25-ին տրամադրված թիվ ԵՀԹ-29/057 թույլտվության մեջ կատարել փոփոխություն՝ ժամկետը երկարաձգել՝ 2 տարով, տրամադրվող տարածքը սահմանել 478 հա հետևյալ կոորդինատներով՝

-Մղարթի տեղամաս.

1.X=4539885.0 Y=8463443.0 2.X=4540790.0 Y=8463381.0 3.X=4540820.0 Y=8462335.0 4.X=4541600.0 Y=8462000.0 5.X=4542470.0 Y=8462430.0 6.X=4541485.0 Y=8464222.0 7.X=4539965.0 Y=8464225.0

-Հագվիի տեղամաս՝

1.X=4549000.0 Y=8464550.0 2.X=4550750.0 Y=8464000.0, 3.X=4550750.0 Y=8464600.0, 4.X=4549200.0 Y=8465750.0 (տրված է ARM WGS-84 համակարգով),

- թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև՝ 2017 թվականի դեկտեմբերի 28-ը:

2. *Աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝*

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն 2012 թվականի դեկտեմբերի 25-ի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թիվ Պ-057 ընդերքօգտագործման պայմանագրում և ծանուցել ընկերությանը՝ հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին.

2) օրենքով նախատեսված ժամկետի սահմաններում ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում կատարված փոփոխությունները ներկայացնել իմ վավերացմանը.

3) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացվելուց հետո, 10-օրյա ժամկետում, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության, ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխված տարբերակը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. *<Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի տնօրենին* - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ